

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Սիրիայի Արաբական Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմք ընդունելով երկու Կողմերի միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերություններն ու համագործակցությունը,

ցանկանալով ամրապնդել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու իրավական հիմքը,

գործելով իրենց օրենքներին համապատասխան, ինչպես նաև հարգելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները, հատկապես՝ ինքնիշխան հավասարության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Իրավական օգնություն տրամադրելու պարտավորությունը

1. Կողմերը, սույն Համաձայնագրին և իրենց ազգային օրենքներին համապատասխան, միմյանց տրամադրում են քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն (այսուհետ՝ իրավական օգնություն) □

2. Իրավական օգնությունը տրամադրվում է սույն Համաձայնագրին համապատասխան, եթե այն արարքը, որի համար հարցում է ներկայացվել, քրեորեն պատժելի է երկու Կողմերի օրենքներով: Հայցվող Կողմը կարող է, իր հայեցողությամբ, տրամադրել իրավական օգնություն նաև այն դեպքում, երբ արարքը, որի առնչությամբ հարցում է ստացվել, իր օրենսդրությամբ քրեորեն պատժելի չէ:

3. Սույն Համաձայնագրի նպատակը բացառապես իրավական օգնություն տրամադրելն է, որի համար պետք է հարցում ներկայացնեն միայն յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները: Սույն Համաձայնագրի դրույթները որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար չեն առաջացնում իրավունքներ՝ ստանալ ապացույց կամ մերժել ապացույց տալը, կամ կանխել իրավական օգնության համար հարցման կատարումը:

4. Սույն Համաձայնագիրը տարածվում է հանցագործությունների կատարման առնչությամբ հետաքննությունների, քննությունների և դատական ընթացակարգերի վրա՝ համաձայն երկու Կողմերի քրեական օրենսդրության:

5. Սույն Համաձայնագիրը Կողմերից մեկի իրավասու մարմիններին իրավունք չի տալիս մյուս Կողմի տարածքում իրականացնելու այնպիսի իրավագործություն, որը բացառապես գտնվում է մյուս Կողմի իրավասության տակ:

Հոդված 2

Իրավական օգնության շրջանակը

Իրավական օգնությունը ներառում է՝

- 1) ընթացակարգային փաստաթղթեր հանձնելը,
- 2) ապացույցներ ստանալը,
- 3) անձանց և առարկաների գտնվելու վայրը և ինքնությունը հաստատելը,
- 4) հայցող Կողմի իրավասու մարմիններ կամավոր ներկայանալու համար վկաներ, տուժողներ և փորձագետներ հրավիրելը,
- 5) կալանքի տակ գտնվող անձի ժամանակավոր փոխանցումը՝ մասնակցելու համար հայցող Կողմի տարածքում քրեական գործերով դատական վարույթներում՝ որպես վկա, տուժող, կամ՝ այլ վարույթներում,
- 6) գույքի պաշտպանության հետ կապված միջոցների ձեռնարկումը,
- 7) հետախուզման և բռնագրավման համար հարցումների կատարումը,
- 8) փաստաթղթերի, իրերի և այլ ապացույցների փոխանցումը,
- 9) հարցումների կատարման ժամանակ հայցող Կողմի իրավասու մարմինների ներկայացուցիչների ներկա գտնվելու համար թույլտվություն տրամադրելը,
- 10) սույն Համաձայնագրի նպատակներին համապատասխան և հայցվող Կողմի օրենքների համաձայն՝ իրավական օգնության որևէ այլ ձևի տրամադրումը:

Հոդված 3

Կենտրոնական մարմինները

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի համապատասխան համագործակցությունն իրականացնելու համար յուրաքանչյուր Կողմ նշանակում է կենտրոնական մարմին:

Հայկական կողմի համար կենտրոնական մարմին է հանդիսանում գլխավոր դատախազությունը (այն անձանց առնչությամբ, որոնց գործերը գտնվում են նախաքննության փուլում) և արդարադատության նախարարությունը (այն անձանց առնչությամբ, որոնց գործերը գտնվում են դատական վարույթում), սիրիական կողմի կենտրոնական մարմին է հանդիսանում արդարադատության նախարարությունը (միջազգային համագործակցության և մարդու իրավունքների վարչությունը) □

Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց անհապաղ ծանուցում են իրենց կենտրոնական մարմինների և նրանց իրավասության շրջանակների փոփոխության մասին:

Հոդված 4

Հարցման ձևն ու բովանդակությունը

1. Իրավական օգնության հարցումը պետք է կազմվի գրավոր, իսկ անհետաձգելի դեպքերում, կամ երբ այլ կերպ թույլատրում է հայցվող Կողմը, հարցումը կարող է

ներկայացվել հեռատիպային, ֆաքսիմիլային, էլեկտրոնային եղանակով կամ հաղորդակցման այլ ձևերով, սակայն դրանից անմիջապես հետո այն պետք է գրավոր հաստատվի: Բոլոր դեպքերում հայցվող Կողմն անհապաղ կատարում է իրավական օգնության համար հարցումը, և հայցող Կողմը չպետք է տեղեկացվի կատարման արդյունքների մասին նախքան հարցումների բնօրինակները ներկայացնելը:

2. Հարցումը ներառում է հետևյալը.

ա) իրավական օգնության համար հարցում ներկայացնող իրավասու մարմնի անվանումը,

բ) իրավական օգնության հարցման նպատակը և հարցման նկարագրությունը,

գ) այն հանցանքի նկարագրությունը, որի առնչությամբ վարվում է հետաքննություն,

քննություն կամ դատական վարույթ, դրա իրավական որակումը, համապատասխան

օրենքի տեքստը, ըստ որի տվյալ հանցանքը քրեորեն պատժելի է, և, անհրաժեշտության

դեպքում, նաև տվյալ հանցանքի արդյունքում պատճառված վնասի չափը,

դ) որևէ ընթացակարգի որոշակի նկարագրությունը, որը հայցող Կողմը ցանկանում է, որ

հարցումն իրականացնելու ընթացքում հայցվող Կողմը պահպանի,

ե) այն անձանց վերաբերյալ անհատական տեղեկությունները, որոնց նկատմամբ

վարվում է հետաքննություն կամ դատական վարույթ,

զ) որևէ վերջնաժամկետ, որի ընթացքում հայցող Կողմը ցանկանում է, որ հարցումը

կատարվի,

է) այն անձանց անունները, ազգանունները, ծննդյան օրը, ամիսը, տարին և վայրը,

հասցեն, ինչպես նաև, հնարավորության դեպքում, հեռախոսահամարները, որոնք պետք

է ծանուցվեն, և նրանց կապը կատարվող հետաքննությանը, քննությանը կամ դատական

վարույթին, ինչպես նաև որևէ այլ օգտակար տեղեկություն,

ը) այն տեղանքի նշումը և այն վայրի նկարագրությունը, որտեղ պահանջվում է

զննության և խուզարկության կատարում, ինչպես նաև բռնագրավման ենթակա

առարկաները,

թ) այն հարցերը, որոնք պետք է տրվեն հայցվող Կողմի տարածքում վկայություն

ստանալու համար,

ժ) եթե դիմում են հայցող Կողմի իրավասու մարմինների ներկայության համար՝ նրանց

անունները, ազգանունները, պաշտոնները, ինչպես նաև նրանց ներկայության հիմքերը,

ժա) հարցման առարկա հանդիսացող փաստերի, հարցման բովանդակության և (կամ)

նկարագրության գաղտնիության պահպանման համար հարցման առնչությամբ

ձեռնարկված որևէ գործողության անհրաժեշտությունը, եթե այդպիսին առկա է,

ժբ) ցանկացած այլ տեղեկություն, որը հարցումը կատարելիս կարող է օգտակար լինել

հայցվող Կողմի համար:

3. Եթե հայցվող Կողմը գտնում է, որ հարցման մեջ պարունակվող տեղեկությունը

բավարար չէ հարցումը կատարելու համար, ապա այդ Կողմը կարող է դիմել լրացուցիչ

տեղեկություն ստանալու համար:

Հոդված 5

Լեզուն

Սույն Համաձայնագրին համապատասխան արված հարցումները և լրացուցիչ փաստաթղթերը պետք է գուգակցվեն հայցվող Կողմի լեզվով կամ անգլերենով հաստատված թարգմանությամբ:

Հոդված 6

Իրավական օգնություն տրամադրելու համար հարցումները մերժելը կամ հետաձգելը

1. Իրավական օգնությունը կարող է մերժվել, եթե.

ա) հարցումը կատարելը կարող է վնասել հայցվող Կողմի ինքնիշխանությանը, անվտանգությանը, հանրային կարգին կամ էական այլ շահերին,

բ) հարցման կատարումը հակասում է հայցվող Կողմի իրավունքին կամ չի համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին,

գ) հարցումը առնչվում է այն հանցանքին, որի համար հայցվող Կողմի տարածքում մեղադրյալը դատապարտվել է, ազատ է արձակվել, կամ վաղեմության ժամկետը լրացել է,

դ) հարցումը առնչվում է ռազմական իրավունքի ներքո հանցագործություն համարվող արարքին, որը ընդհանուր քրեական իրավունքով հանցագործություն չէ,

ե) հայցվող Կողմը բավարար հիմքեր ունի կարծելու, որ հարցումը ներկայացվել է անձի նկատմամբ վարույթ հարուցելու համար՝ ելնելով նրա ռասայից, սեռից, կրոնից, քաղաքացիությունից, էթնիկական ծագումից, որոշակի սոցիալական խմբին պատկանելությունից կամ քաղաքական համոզմունքներից, կամ անձը կարող է վնաս կրել նշված պատճառներից որևէ մեկի հետևանքով:

2. Բանկային գաղտնիքին կամ հարկման գաղտնիության հետ կապված իրավական օգնության տրամադրումը կատարվում է հայցվող Կողմի ազգային օրենսդրության համաձայն: Կողմերի մասնակցությամբ գործող միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաների համաձայն՝ ահաբեկչության հանցագործությունների հարցով իրավական օգնությունը չի կարող մերժվել:

3. Հայցվող Կողմը կարող է հետաձգել կամ մերժել իր տարածքում հարցման կատարումը, եթե համարում է, որ նման կատարումը կարող է միջամտել կամ վնասել քրեական գործի առնչությամբ կատարվող ընթացիկ հետաքննությանը, քննությանը կամ դատավարությանը:

4. Հայցվող Կողմը նախքան հարցման կատարումը հետաձգելու կամ մերժելու վերաբերյալ որոշում կայացնելը քննարկում է, թե արդյոք իրավական օգնությունը կարող է տրամադրվել այնպիսի պայմաններով, որոնք նա անհրաժեշտ է համարում: Եթե հայցող Կողմն ընդունում է նման պայմաններով իրավական օգնությունը, նա պարտավոր է հետևել դրանց:

5. Եթե հայցվող Կողմը որոշում է կայացնում իրավական օգնության տրամադրումը հետաձգելու կամ մերժելու մասին, ապա նա իր կենտրոնական մարմինների միջոցով հայցվող Կողմին տեղեկացնում է այդ մասին՝ տալով նման որոշման հիմքերը:

Հոդված 7

Փաստաթղթերի վավերականությունը

1. Սույն Համաձայնագրին համապատասխան փոխանցված և փոխանցող Կողմի կենտրոնական կամ իրավասու մարմինների կնիքով հաստատված փաստաթղթերը ստացող Կողմն ընդունում է առանց օրինականացման ընթացակարգերի կամ վավերականության հաստատման այլ ձևերի:

2. Սույն Համաձայնագրի նպատակներով՝ փաստաթղթերը, որոնք ճանաչվում են որպես պաշտոնական Կողմերից մեկի տարածքում, ճանաչվում են որպես այդպիսին մյուս Կողմի տարածքում:

Հոդված 8

Գաղտնիությունը և տեղեկատվության օգտագործման սահմանափակումները

1. Հայցող Կողմի հարցման հիման վրա հայցվող Կողմը գաղտնի է պահում իրավական օգնության համար հարցումը, դրա բովանդակությունը, լրացուցիչ փաստաթղթերը և հարցման համաձայն կատարված ցանկացած գործողություն, ինչպես նաև նման օգնություն տրամադրելու փաստը:

Եթե հարցումը չի կարող կատարվել առանց գաղտնիությունը խախտելու, ապա հայցվող Կողմն այդ մասին տեղեկացնում է հայցող Կողմին, որն այնուհետև որոշում է, թե արդյոք հարցումը, այնուամենայնիվ, պետք է կատարվի:

2. Հայցող Կողմը առանց հայցվող Կողմի թույլտվության չի օգտագործում սույն Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկությունները կամ վկայությունները այլ նպատակներով, քան այն, որ նշված է իրավական օգնության համար հարցման մեջ:

3. Առանձին դեպքերում, երբ հայցող Կողմի համար անհրաժեշտ է բացահայտել և մասնակիորեն կամ ամբողջությամբ օգտագործել տեղեկատվությունը կամ վկայությունը այլ նպատակներով, քան այն, որ նշված է հարցման մեջ, նա խնդրում է համաձայնություն հայցվող Կողմից, որը կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ մերժել:

Հոդված 9

Իրավական օգնության հարցումների կատարումը

1. Հարցումները կատարվում են հայցվող Կողմի օրենքներին և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Հայցող Կողմի հարցման հիման վրա հայցվող Կողմը իրավական օգնություն է տրամադրում այն ձևով և այն հատուկ ընթացակարգերին համապատասխան, որոնք նշված են հարցման մեջ՝ այնքանով, որքանով դրանք չեն հակասում հայցվող Կողմի օրենքներին:

2. Հայցող Կողմի խնդրանքով՝ համապատասխան քննության մասնակիցները, նրանց օրինական ներկայացուցիչները և հայցող Կողմի ներկայացուցիչները կարող են ներկա

գտնվել հայցվող Կողմի տարածքում հարցման կատարմանը՝ հայցվող Կողմի օրենքների և ընթացակարգերի համաձայն:

3. Հայցվող Կողմի կենտրոնական մարմինը հարցման արդյունքում ստացված տեղեկատվությունը և վկայությունը պատշաճ ժամկետներում փոխանցում է հայցող Կողմի կենտրոնական մարմնին:

4. Եթե հարցման կատարումը մասնակիորեն կամ ամբողջությամբ հնարավոր չէ, ապա հայցվող Կողմի կենտրոնական մարմինը այդ մասին անհապաղ տեղեկացնում է հայցող Կողմի կենտրոնական մարմնին՝ նշելով հարցման կատարմանը խոչընդոտող պատճառների մասին:

Հոդված 10

Փաստաթղթերը հանձնելը

1. Հայցվող Կողմը, իրավական օգնության համար հարցմանը համապատասխան, անհապաղ փոխանցում կամ կազմակերպում է ընթացակարգային փաստաթղթերի փոխանցումը:

2. Հարցման կատարումը հաստատվում է հանձնման փաստաթղթով՝ նշելով ամսաթիվը, ամիսը, տարին, հասցեատիրոջ ստորագրությունը կամ հայցվող Կողմի իրավասու մարմնի հայտարարությունը, որում հաստատվում են հանձնման փաստը, ամիսը, ամսաթիվը, տարին և եղանակը: Հայցող Կողմն անհապաղ տեղեկացվում է փաստաթղթերի հանձնման մասին:

Հոդված 11

Հայցվող Կողմի տարածքում վկայություն վերցնելը

1. Հայցվող Կողմը, իր իրավունքին համապատասխան, իր տարածքում վերցնում է վկաների և տուժողների վկայություններ, փորձագիտական եզրակացություններ, փաստաթղթեր, իրեր, հարցման մեջ նշված այլ վկայություններ և դրանք փոխանցում հայցող Կողմին:

2. Հայցող Կողմի իրավասու մարմինների ներկայացուցիչները, որոնք ներկա են գտնվում հարցման կատարման ժամանակ, իրավունք ունեն ձևակերպելու հարցեր, որոնք համապատասխան անձին կարող են տրվել հայցվող Կողմի իրավասու մարմնի ներկայացուցչի կողմից:

3. Հայցող Կողմը պահպանում է հայցվող Կողմի կողմից ներկայացված պայմանները՝ կապված բոլոր այն փաստաթղթերի և իրերի հետ, որոնք կարող են հանձնվել իրեն, այդ թվում՝ նման փաստաթղթերի և իրերի առնչությամբ երրորդ կողմի շահերի պաշտպանության պայմանները:

4. Այնուհետև հայցող Կողմը, հայցվող Կողմի պահանջով, սույն հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան, անմիջապես վերադարձնում է հանձնված փաստաթղթերի և իրերի բնօրինակները:

Հոդված 12

Անձանց և իրերի գտնվելու վայրը և ինքնությունը հաստատելը

Հայցվող Կողմի իրավասու մարմինները, իրենց պետության իրավունքին համապատասխան, օգտագործում են իրենց բոլոր հնարավորությունները՝ պարզելու համար հարցման մեջ նշված անձանց ինքնությունը և իրերի գտնվելու վայրը:

Հոդված 13

Հայցող Կողմի տարածքում վկաների, տուժողների և փորձագետների անձամբ ներկայանալը

1. Եթե հայցող Կողմը հարցում է ներկայացնում անձամբ ներկայանալու վերաբերյալ՝ վկայություն տալու, փորձաքննություն անցկացնելու կամ իր տարածքում այլ ընթացակարգային գործողություններ իրականացնելու համար, ապա հայցվող Կողմն իր տարածքում գտնվող անձին տեղեկացնում է հայցող Կողմի՝ իր իրավասու մարմիններ ներկայանալու հրավերի մասին:
2. Ներկայացող անձը հայցող Կողմի կողմից տեղեկացվում է իր ներկայանալու հետ կապված վճարումներին և ծախսերին առնչվող պայմանների և պահանջների, ինչպես նաև այն երաշխիքների մասին, որոնցից իրավունք ունի օգտվելու տվյալ անձը՝ սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածին համապատասխան:
3. Դատական ծանուցագիրը չպետք է պարունակի սպառնալիք հայցող Կողմի տարածք անձի չներկայանալու դեպքում հարկադրանք կամ պատիժ կիրառելու մասին:
4. Ծանուցված անձն ինքն է որոշում մյուս Կողմի տարածք ներկայանալու հարցը: Հայցվող Կողմի կենտրոնական մարմինը հայցող Կողմի կենտրոնական մարմնին անհապաղ տեղեկացնում է այդ անձի որոշման մասին:

Հոդված 14

Պաշտպանված վկայությունը

1. Հայցող Կողմի տարածքում իրավասու մարմին ներկայացած անձը, անկախ իր քաղաքացիությունից, տվյալ Կողմի տարածքում չպետք է կալանավորվի կամ ենթարկվի քրեական հետապնդման կամ անձնական ազատության ցանկացած այլ սահմանափակման այնպիսի արարքի համար կամ որևէ մեղադրանքի հիման վրա, որը նախորդել է հայցող Կողմի տարածք այդ անձի մուտք գործելուն:
2. Ծանուցված անձը կորցնում է սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված իր անձեռնմխելիության իրավունքը, եթե նա, ազատ լինելով հեռանալ հայցող Կողմի տարածքից, չի հեռացել 15 օրվա ընթացքում այն բանից հետո, երբ համապատասխան իրավասու մարմնի կողմից նրան գրավոր ծանուցվել է, որ իր ներկայությունն այլևս չի պահանջվում, կամ, հեռանալով տվյալ տարածքից, կամավոր վերադարձել է այնտեղ:

3. Ծանուցված անձը չպետք է հարկադրվի ներկայացնելու վկայություն այլ դեպքերի վերաբերյալ, որոնք հարցման մեջ նշված չեն:

Հոդված 15

Կալանքի տակ գտնվող անձանց ժամանակավոր փոխանցումը

1. Կալանքի տակ գտնվող անձը (այդ թվում՝ այն անձը, որը պատիժ է կրում ազատագրկման ձևով), անկախ իր քաղաքացիությունից, հայցվող Կողմի համաձայնությամբ կարող է ժամանակավորապես փոխանցվել հայցող Կողմին՝ որպես վկա կամ տուժող վկայություն տալու կամ հարցման մեջ նշված դատական այլ վարույթների աջակցելու համար՝ պայմանով, որ տվյալ անձը վերադարձվի հայցվող Կողմին վերջինիս կողմից սահմանված ժամանակահատվածում:

Նախնական ժամանակահատվածը, որի համար անձը կարող է փոխանցվել, չպետք է գերազանցի 90 օրը: Հայցող Կողմի հիմնավորված հարցման հիման վրա փոխանցված անձի մնալու ժամկետը կարող է երկարաձգվել հայցվող Կողմի կողմից:

Անձի փոխանցման և վերադարձնելու կարգն ու պայմանները համաձայնեցվում են Կողմերի կենտրոնական մարմինների կողմից:

2. Անձի փոխանցումը մերժվում է՝

ա) եթե կալանքի տակ գտնվող անձը (այդ թվում՝ այն անձը, որը պատիժ է կրում ազատագրկման ձևով) դրա համար գրավոր համաձայնություն չի տալիս,

բ) եթե տվյալ անձի մասնակցությունն անհրաժեշտ է հայցվող Կողմի տարածքում դատական ընթացակարգերում:

3. Հայցող Կողմը փոխանցված անձին կալանքի տակ է պահում այնքան ժամանակ, որքան ուժի մեջ է այդ անձին կալանքի տակ պահելու մասին հայցվող Կողմի իրավասու մարմնի որոշումը:

Եթե հայցվող Կողմի որոշման համաձայն կալանքի տակ պահվող անձն ազատ է արձակվում, հայցող Կողմն այդ անձի նկատմամբ կիրառում է սույն Համաձայնագրի 13-րդ, 14-րդ և 18-րդ հոդվածների դրույթները:

4. Եթե կալանքի տակ գտնվող կամ ազատագրկման պատիժ կրող անձը համաձայն չէ ներկայանալու հայցող Կողմի տարածք, ապա անհամաձայնության համար նա չպետք է ենթարկվի հարկադրանքի որևէ միջոցի կամ պատժի:

Հոդված 16

Հայցող Կողմի տարածք փոխանցված կամ հարցմամբ ներկայացած անձի պաշտպանությունը

Հայցող Կողմն անհրաժեշտության դեպքում ապահովում է իր տարածք փոխանցված կամ հարցմամբ ներկայացած անձի պաշտպանությունը՝ սույն Համաձայնագրի 13-րդ և 15-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 17

Իրերի հետ կապված միջոցներ ձեռնարկելը

1. Կողմերը համագործակցում են հանցագործության գործիքների և հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների բացահայտման, ինչպես նաև դրանց հետ կապված համապատասխան միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ:

Նման համագործակցությունը հիմնված է սույն Համաձայնագրի դրույթների, ինչպես նաև «Անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ» 2000 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիայի համապատասխան դրույթների, մասնավորապես 2-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների վրա և տարածվում է ոչ միայն այդ Կոնվենցիայով և դրա արձանագրություններով կարգավորվող հանցագործությունների վրա, այլև սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան որևէ այլ քրեական արարքի վրա:

2. Սույն Համաձայնագիրն ստորագրելուց հետո Կողմերը միջոցներ են ձեռնարկում համաձայնության գալու համար հանցավոր գործունեությունից ստացված եկամուտները և բռնագրավված իրերը բաժանելու մասին՝ որպես Կողմերի համագործակցության արդյունք, որը կազմվում է որպես սույն Համաձայնագրի արձանագրություն:

Հոդված 18

Ծախսերը

1. Հայցվող Կողմն իր տարածքում կրում է իրավական օգնության համար հարցման կատարման սովորական ծախսերը՝ բացառությամբ այն ծախսերի, որ կրում է հայցող Կողմը՝

ա) դեպի իր տարածք և իր տարածքից անձանց տեղափոխման հետ կապված ծախսերը, սույն Համաձայնագրի 13-րդ և 15-րդ հոդվածներին համապատասխան, և իր տարածքում նրանց գտնվելու և այդ անձանց համար վճարվելիք այլ ծախսերը.

բ) փորձագետների ծախսերն ու վճարները.

գ) սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան՝ հարցման կատարմանը հայցող Կողմի իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցության և գործուղման հետ կապված ծախսերը.

դ) փոխանցված առարկաները հայցվող Կողմի տարածքից հայցող Կողմի տարածք և հետադարձ տեղափոխման հետ կապված ծախսերը:

2. Եթե հարցման կատարումը պահանջում է էական կամ արտակարգ ծախսեր, ապա Կողմերի կենտրոնական մարմինները նախաձեռնում են խորհրդակցություններ՝ նպատակ ունենալով սահմանելու հարցման կատարման պայմանները, ինչպես նաև այդ ծախսերի վճարման եղանակները:

Հոդված 19

Խորհրդակցությունները և վեճերի լուծումը

1. Կողմերի կենտրոնական մարմինները միմյանց ուղղված հարցման դեպքում խորհրդակցում են միմյանց հետ սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման շուրջ՝ ընդհանուր առմամբ կամ մասամբ:
2. Սույն Համաձայնագրի մեկնաբանումից և (կամ) կիրառումից ծագած վիճահարույց հարցերը լուծվում են դիվանագիտական բանակցությունների միջոցով՝ երկու Կողմերի կենտրոնական մարմինների ներգրավմամբ:

Հոդված 20

Կիրառման ժամանակահատվածը

Սույն Համաձայնագիրը կիրառվում է ուժի մեջ մտնելուց հետո արված հարցումների նկատմամբ, եթե նույնիսկ համապատասխան արարքները կամ բացթողումները տեղի են ունեցել մինչև այդ օրը:

Հոդված 21

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման:
2. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով Պայմանավորվող կողմերի՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցումն ստանալու օրվանից:
3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է չեղյալ հայտարարել սույն Համաձայնագիրը մյուս Կողմին գրավոր ծանուցելու միջոցով: Համաձայնագիրը չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում ծանուցումը մյուս Կողմի ստանալուց 6 ամիս հետո:
4. Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները ձևակերպվում են արձանագրություններով, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

Կատարված է Դամասկոս քաղաքում 2010 թվականի մարտի 23-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանության ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 25-ին